

ԲՀԱԳԱՎԱԴԳԻՐՏԱ՝ ԿԱՄ ԵՐԱՆԵԼՈՒ ԵՐԳԸ.

(Շարունակումիւն)

ԺԸ.

Արցունքան խօսեց.

Անձնուրացութեան ու հրաժարման խտրութիւնը ցանկա-  
նում եմ գիտենալ, սիլ մեծադօր, դանդրահեր սպանող Աեշինի:

Կրիտիկան խօսեց.

Յանկութեան գործերից հրաժարուելը՝ բանաստեղծները  
կոչում են հրաժարում. և ամբողջ գործերի վարձատրութիւնը  
թողնելը գիտունները կոչում են անձնուրացութիւն:

Այն գործերը որ պէտք է թողնել, մեղք են համարում  
իմաստունները. իսկ դո՛հ, սղորմութեան և ճգնութեան գոր-  
ծերը պէտք է թողնել ասում են ուրիշները:

Նոյն աշխարհում պատուէրը անձնուրացութեան մասին,  
սիլ Բհանրատաների լաւագոյնը: Անձնուրացութիւնը, սիլ առիւ-  
ծասիրտ, երեք տեսակ է լինում:

Չո՛հ, սղորմութեան և ճգնութեան գործերը պէտք է  
թողնել, այլ կատարել. որովհետեւ Չո՛հը, սղորմութիւնը և  
ճգնութիւնը սրբագործութիւններ են իմաստունների ասելով:

Եթէ ցանկութիւնը և վարձատրութիւնը թողել են, թող  
կատարեն այս գործերը. ահա իմ դերագոյն պատուէրն ու  
կամքը:

Անհրաժեշտ գործից հրաժարումը գործադրելի է. յե-  
մարութիւն է մի այսպիսի անձնուրացութիւն և խաւարի  
ճնունդ:

Ով «դժուար է» ասելով ու մարմնական յոգնութիւնից  
վախենալով թողնում է գործը, նա հրաժարում է բնագոյով  
միայն և իր անձնուրացութիւնից ոչ մի օգուտ չի քաղում:

«Պիտի անեմ». այսպէս պէտք է ասել ու կատարել ան-  
հրաժեշտ գործը, սիլ Արջունա. իսկ ցանկութիւնից և վար-  
ձատրութիւնից հրաժարուել՝ դա անձնուրացութեան հենց  
էութիւնն է:

Ոչ անյաջող գործից է հրաժարում և ոչ յաջողակին  
հետևում նա՝ որ էսպէս անձնուրաց է, խելացի և կասկա-  
ճանքից ազատ:

Որովհետեւ մարմնաւոր մարդը բոլոր գործերից հրաժար-

ուել անկարող է. բայց երբ գործերի վարձատրութիւնից հրաժարուում է, նա գործում է անձնուրացութիւն:

Անցանկալի, ցանկալի և սոցա խառնուրդը. ահա մահուանից յետոյ անանձնուրացների գործերի երբեակ վարձատրութիւնը. բայց ոչ նաև անձնուրացների:

Սովորիք ինձանից այն հինգ սիզբուները, որ Ապացուցական Աարդապետութիւնը յայտարարում է իբր պարունակուած ամէն գործի մէջ:

Սորա են Աւղղութիւնը, Ազգակը, Գործիքը, զանազան ջանքերը և հինգերորդ Աստուածային միջամտութիւնը:

Գործով, խօսքով ու խորհրդով կատարուած ամէն մարդկային գործ, բարի թէ չար, յիշեալ հնդից է առաջանում:

Այս ճշմարիտ լինելով, ով միակ գործիչը իրան է կարծում տղիտութեամբ, նա սխալ է մտածում:

Ով ետասէր չէ, և որի բանականութիւնը խաւարած չէ, սպանելով հանդերձ այս պատերազմիկներին, սպանող չէ ու մեղաւոր չէ:

Գիտութիւնը, նրա առարկան ու նրա նիւթը. ահա գործողութեան երեք շարժիչները Գործարանը, Գործողութիւնը և Գործիչը. ահա և գործողութեան երեք հասկացողութիւնները:

Գիտութիւնը, Գործողութիւնը և Գործիչը երեք տեսակ են իրենց Յատկութեանց համեմատ. Յատկութեանց վարդապետութիւնը բացատրած լինելով, լսիք այժմ նրանց հետեութիւնը:

Այն գիտութիւնը որ բոլոր կենդանի էակների մէջ ցոյց է տալիս միակ անփոփոխելի էակը, բաժանեալ իրերի մէջ անբաժանելի, դա ճշմարիտ գիտութիւնն է:

Այն գիտութիւնը որ բոլոր կենդանի էակների մէջ տեսնում է իւրաքանչիւր էակի անհատական բնութիւնը, նա բնազդական գիտութիւնն է:

Իսկ այն անսկզբունք, ն'դ ու անճիշտ գիտութիւնը որ նայում է գործին իբրև բոլորովին առանձին երևոյթ, կոչւում է խաւարի գիտութիւն:

Անհրաժեշտ, բազդից ազատ գործը, կատարուած ցանկութիւնից և ատելութիւնից ազատ մարդուց և առանց վարձատրութեան ակնկալութեան, ճշմարտութեան գործն է:

Եր ցանկութեան գոհացման և իր եսի համար ու բազմաթիւ ջանադրութիւններով կատարուած գործը կրքի գործ է:

Առանց հետեանքը, շահը կամ վնասը և իր ուժերը կըշ-

ուելու՝ յիմարութեամբ ձեռնարկուած դործը խաւարի դործ է:

Կրկնու ետասիրութիւնից ազատ, հաստատակամութեամբ և արիութեամբ օժտուած, յաջողութիւնից ու անյաջողութիւնից անտարբեր դործիչը ճշմարտութեան դործիչ է:

Կրքոտ, դործերի վարձատրութիւնն ակնկալող, ազան, վնասակար, անմաքուր, հաճոյքի ու ցաւի անձնատուր դործիչը կրքի դործիչ է:

Անընդունակ, ստորին, յամառ, խարեքայ, անհող, դատարկապորտ, ծոլ, նստակեաց ու քարշ եկող մարդը խաւարի դործիչ է:

Այժմ լսիք մտքի և յարատեութեան երեք բաժանումները, ամբողջապէս ու մանրամասնաբար, համաձայն անհատական յատկութեանց:

Այս միտքը որ դործելու և շղործելու, երկիւղի և ապահովութեան, կապանքի և ազատութեան ծագումն ու վերջը դիտէ, ճշմարտութեան միտք է:

Այն միտքը որ արդարն ու անարդարը, դործելու ու շղործելու բանը շինթ կերպով դիտէ, բնագրական միտք է:

Այն միտքը որ անարդարութիւն է կոչում արդարութիւնը, խաւարով պատած է և հակառակն է անում ամէն բանի, խաւարի միտքն է:

Այն յարատեութիւնը որ մտքի, սրտի ու զգայարանների դործերը բռնում է անփոփոխելի Եօզայով, ճշմարտութեան յարատեութիւնն է:

Այն յարատեութիւնը որ հետեւում է բարուն, դեղեցկին ու օգտակարին, բնագրամբ ձգտելով դործերի վարձատրութեան, դա կրքի յարատեութիւնն է:

Այն անմիտ յարատեութիւնը՝ որ քնից, երկիւղից, տրեւութիւնից, սոսկումից ու յիմարութիւնից չի ազատում մարդուն, խաւարի յարատեութիւնն է:

Այժմ լսիք հաճոյքի երեք տեսակները՝ երբ մէկը վարժութեամբ հրճւում է և վերջ դնում իր տխրութեան,

եւ երբ ինչ որ սկզբում թոյն էր՝ դարձնում է յետոյ նեկտառ, այն ժամանակ իր հաճոյքը կոչւում է ճշմարիտ, երբ ծնած իր մտքի ներքին անդորրութիւնից:

Այն հաճոյքը որ ծնում է զգայարանների և զգալի իրերի ծարաւերութեամբ և սկզբում նման է նեկտառի ու յետոյ թոյնի, դա կրքի հաճոյքն է:

Այն հաճոյքը որ սկզբում և իր հետեւանքների մէջ հողուխառիութիւն է միայն, անդործութեամբ, ծուլութեամբ և մոլորութեամբ դարդացած, դա խաւարի հաճոյքն է:

Ոչ երկրի վրայ, ոչ երկնքում աստուածների մէջ չկայ մի էութիւն որ բնութիւնից առաջացած այս երեք յատկութիւններից ազատ լինէր:

Երանմանների, Աշտարիանների, Այսսիանների և Սնւարանների մէջ պաշտօնները բաժանուած են իրանց բնական յատկութեանց համեմատ:

Խաղաղութիւնը, ժուժկալութիւնը, ճգնութիւնը, մարբութիւնը, համբերութիւնը, շիտակութիւնը, գիտութիւնը, գիտելիքները և աստուածածանօթութիւնը Երանմանի բնածին պաշտօնն է:

Աարձութիւն, կարող, հաստատակամութիւն, ճարպիկութիւն, կռուի մէջ աներկիւղութիւն, ողորմութիւն, վարչականութիւն. ահա Աշտարիայի բնածին պաշտօնը:

Երկրագործութիւն, խաշնապահութիւն, վաճառականութիւն վաշսիայի բնածին պաշտօններն են: Իսկ ծառայել միւսներին Սնւարայի բնածին պաշտօնն է:

Այն մարդը որ ինչ որ էլ լինի իր պաշտօնը, գոհ է նրանից, հասնում է կատարելութեան: Այժմ լսիք թէ ինչպէս մարդ իր պաշտօնից գոհունակութեամբ կատարելութեան է հասնում:

Իր գործերով պատուելով նրան որից ծագել են էակները և որից այս բոլոր տիեզերքն է կազմուած, հասնում է մարդ կատարելութեան:

Աւելի լաւ է սեփական ստորին պաշտօնը ուրիշի բարձր պաշտօնից. բնածին պաշտօնի գործերը կատարելով մարդ չի մեղանշում:

Բնածին պաշտօնը նոյն իսկ եթէ չարիքով միացած լինի, չպէտք է թողնել. որովհետեւ ամէն գործ չարիքով պաշարուած է, ինչպէս կրակը ծխով:

Սիրտը կապանքներից ազատ, ամէն ժամանակ անձնիշխան ու ցանկութիւնները վանած մարդը հանգստի գերագոյն կատարելութեան է հասնում անձնուրացութեամբ:

Հասնելով կատարելութեան, այնուհետեւ գնում է Երանմային. սովորիւ այդ ինձանից համառօտիւ, որովհետեւ այդ է գիտութեան գերագոյն կայանը:

Մարտը բանականութեամբ միացած, հոգին յարատևութեամբ նուաճած, աղմուկն և զգայութիւնները թողած, ցանկութիւններն ու աակելութիւնը հեռացրած,

Առանձնակեաց, սակաւապէտ, իր խօսքին, մարմնին ու մտքին տէր, միշտ կատարելով գերագոյն հոգևոր Եօզան, կրքերը հեռացնելու մտադիր:

• Եսասիրութիւնից, բռնութիւնից, հպարտութիւնից, սիրուց, բարկութիւնից, շքախմբերից հեռու, այլասէր, հանդարտ, հաղորդակցում է Աստուածային բնութեան:

Աստուծոյ հետ հաղորդ, հոգին անդսրը, նա էլ չի առապում, նա էլ չի ցանկանում. անտարբեր դէպի ամէն կենդանի էակ, ընդունում է իմ գերագոյն պաշտամունքը:

Պաշտելով ինձ, ճանաչում է ինձ այնպէս ինչպէս եմ ես իմ էութեան մէջ, և ինձ իմ էութեամբս ճանաչելով մանում է իմ մէջ և էլ ուրիշ չէ:

Ով իր բոլոր գործերը անդադար կատարում է՝ ինձ միայն դիմելով, իմ շնորհով հասնում է յաւիտենական և անայլայլ բնակարանը:

Կատարի՛ր ուրեմն մտքով բոլոր գործերից հրաժարումը ինձ համար. կատարի՛ր բանականութեան Եսդան և մտածի՛ր միշտ իմ մասին:

Ե՛մ վրայ մտածելով բոլոր վտանգներից դու իմ շնորհով կանցնիս. իսկ եթէ դու եսասիրութեամբ շլո՛տս ինձ, պիտի կորչիս:

Դու եսասիրաբար մտածելով, «Ես չեմ կռուիլ» ասում ես. այս միտքը անակեղի է. բնութիւնը քեզ կստիպի:

Դու քու բնածին պաշտօնովը կապումս, ինչ որ կատարել չես ուզում յիմարարար, պիտի անես ահամայ:

Մի իշխան կայ նստած բոլոր կենդանի էակների սրտում, ո՛վ Արջունա, որ շարժում է բոլոր էակներին իր մի ծածուկ զօրութեամբ:

Նրան ապաստանի՛ր քո բոլոր էութեամբ, և նրա շնորհով դու կը հասնիս գերագոյն հանդիսար, յաւիտենական բնակարանը:

Ահա սովորեցրի քեզ խորհրդաւոր դիտութիւնը իր գաղտնիքների գաղտնիքներով. հետախուզի՛ր նրան մանրամասն և յետոյ արա՛ ինչպէս ուզում ես:

Կսի՛ր և իմ վերջին խօսքերն՝ բովանդակ գաղտնիքների ծայրագոյնը. դու իմ սիրելին ես և իմ խօսքերը քեզ օգտակար կը լինին:

Մտածի՛ր ինձ, պաշտի՛ր ինձ, դոճի՛ր ինձ, օրհնի՛ր ինձ, և դու ինձ կը հասնիս. իմ խոստումը ճշմարիտ է և դու իմ սիրելին ես:

Թո՛ղ բոլոր օտար պաշտամունքները, և միայն ինձ ապաստանի՛ր. ես քեզ բոլոր մեղքերից կը լիզեմ. մի՛ տխրի՛ր:

Մի՛ պատմի՛ր իմ այս խօսքերս նրանց՝ որ անժուժկալ են, անկրօն են. որ չեն ուզում լսել, որ ինձ ուրանում են:

Բայց նա որ իմ այս գերագոյն գաղանփքներս իմ ծառաների մէջ տարածուած է, մատուցանելով ինձ գերագոյն պաշտամունքը, նա ինձ պիտի դայ անտարակոյս:

Ոչ որ չի կարող մարդկանց մէջ սրանից աւելի հաճելի գործ կատարել, և ուրիշ ոչ որ երկրի վրայ չի կարող աւելի սիրելի լինել ինձ:

Ով կարգայ այս մէք սրբազան խօսակցութիւնը, դիտութեան զօհը մատուցած պիտի լինի ինձ. այդ է իմ միտքը:

Եւ այն հաւատացեալ մարդը՝ որ առանց հակառակութեան լսում է նրան, նա էլ քաւուած պիտի երթայ մարբակենցաղ երանեալների աշխարհը:

Արդեօք լսեցիր այս բոլորը, ո՞վ Պրիթայի որդի, քո սեւուուն մտքով. և արդեօք տգիտութեան խռովութիւնները անհետացան քեզ համար:

Արջունան խօսեց.

Կորաւ խռովութիւնը. ես ստացայ սրբազան աւանդութիւնը քո շնորհիւ, ո՞վ Աստուած. ես անվրդով եմ այժմ. տարակոյսս փարատուած է. ես կը կատարեմ քո խօսքերը:

Սանգայան խօսեց.

Եւ ես Վանուդեայի և Պրիթայի մեծահոգի որդու այս վեհագոյն խօսակցութիւնը լսում էի փշաքաղուած:

Վիանայի շնորհիւ լսելով ես Եօգայի այս գերագոյն գաղանփքը՝ Եօգայի տէր Արիշնայից պատմուած:

Ո՞վ թագաւոր, ես յիշում եմ, յիշում եմ անգաղար Աբջունայի և Արիշնայի այս գերագոյն խօսակցութիւնը, և հրճուում եմ ընդմիշտ ընդմիշտ:

Եւ երբ յիշում եմ, յիշում եմ Հարիի այն գերբնական երևոյթը, ես մնում եմ քարացած ու հրճուում եմ անվերջ անվախճան:

Այնտեղ ուր է Եօգայի տէրը՝ Արիշնան, այնտեղ ուր է Պրիթայի աղեղնաւոր որդին, այնտեղ է և երջանկութիւնը, յաղթութիւնը, փրկութիւնը, հաստատակամութիւնը: Այս է իմ հաւատքը:

Այսեղ վերջանում է Բհագավադգի՛սա՛յի քասնութերորդ գլուխը, որի անունն է Հրաւարման ու Անձնութեան Եօգա:

Այսեղ լրանում է Բհագավադգի՛սա՛ն:

Շուրհամ աստու սարվաջագատամ  
(Երջանկի թող լինեն բոլոր էակները)